



ներ կարգացած են անոնց հանդէպ, որոնք եկեղեցիներէն իրենց ինչքերը կը խլեն: Յայտարարեցէք վերջապէս որ, գուցէ անկարելի ըլլայ գերագոյն պատրիարքական աթոռին եւ անոր քահանայապետին մնալ ու շարունակել իրենց պաշտօնը սոյն կարգադրութիւններէն յետոյ, որոնք իրենց իշխանութեան հիմերը կը քանդեն, եւ որոնք կը ձգտին վարկաբեկել էջմիածնայ աթոռն ու գերագոյն պատրիարքութիւնը:

Եւ մենք. էջմիածնայ աթոռոյն նուիրեալ Ձեր խոնարհ որդիներս, պատրաստ ենք գործել այնքան որքան որ ցուցնուի որ, այնատիւ որքան անհրաժեշտ է. զիմուսներ փորձել ամէն այն տեղերը ուր յաջողութեան յոյս վը նշուի, եւ փութով ազատել մեր կոչման ու պաշտօնին վրանիս դրած պարտականութենէն, կը յուսանք ի մտոյ լաւ լուծման ընդունել այն մասին Ս. էջմիածնայ կատարած զիմուսներէն, ինչ որ պիտի ցրուի մեր լուսնեան մեզ առթած վիշտն ու վարանումը: Եւ վստահ եղիք որ մեր վիշտը իրապէս պիտի կրկնապատկուի եւ խոր անհանգստութիւն մը զմեզ պիտի պատէ, երբ Ձեր Սրբութիւնը զեզ չի մխիթարէ իմացնելով իր ջանքերն ու գործերը:

Յերմակա կը մաղկենք Ձեր քաջափր անձին անհրաժեշտ ուժ եւ կը խնդրենք մեր Ս. եկեղեցուն երկնաւոր հետէն, որ իր օգնութիւնը շնորհէ մեր բազմաշխատ քահանայապետին, որպէսզի մենք եւս կարենանք զէ՛ս կենալ ամէն փորձութեանց եւ խուսափել ամէն կորուստէ, բարեխօսութեամբ սրբոց առաքելոցն միտոց Թագնոսի եւ Բարթողիմէոսի, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Առաջնորդի եւ ամենայն սուրբ հարապետաց զարգացնող զարգացնողաց, որոց աղօթից շնորհիւ Տէրը պաշտպանած է, կը պաշտպանէ եւ պիտի պաշտպանէ մեր եկեղեցին մինչեւ դարբուրու վախճանը: Այս է մեր մաղթանքն ու մեր որդիական յարգանաց հաւատարմութիւնը, որով կրկին անգամ մատչիմք ի համարը Ս. Աջոյք եւ զմեզ կը դուռնանք օրինաւոր զաւակունքը էջմիածնայ Աթոռոյն եւ մեր սուրբ ու առաքելաշնորհ քահանայապետին:

Գրեալ յաւի Տեառն 1903  
Ի Կ. Պոլիս

Մաղաքիս արքեպիսկոպոս պատրք. Կ. Պոլսոյ  
Մերոպ արքեպ. Սուքիսեան  
Բարթողիմէոս Զամբան  
Գրիգորիս Թաննէսեան  
Վահրամ Եպիս. Մանկունի  
Եզնիկ Եպիսկոպ  
Հմայեակ « Դիմաքսեան  
Մկրտիչ « Վեհապետեան  
Փերոզ « Երէցեան  
Գարբիէ « Ընկալիչեան  
Օհաննէս « Արարեւնի

ԹԵՂԵԱՎՅՈՒԹԻՒՆ

Թավրիզ 25 Ապր. 1903

Կիրակի. առոյս 21ին Ղալայի մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարուեց Կովկասում նահատակուած մեր եղբայրների յիշատակին: Գրատոր յայտարարութիւն չի լինելու պատճառով բոլոր հայերը չէին հաւաքուել. եկեղեցում եղողներին շատերն էլ գացել էին, որպէս կրեա-

կի. առում են որ առաջնորդը չէր ցանկացել յայտարարել, որպէսզի առեսաց կոնսիլը չիմանայ: Պատարագիչն էր ինքը՝ առաջնորդը, որը մի քարոզով բացատրեց օրուայ արխուր պատկերը: Համարեայ իոյն ըովանդակութեամբ էլ ձառ խօսեց մի պարուն:

Թէ ինչ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրայ Հ. Եղիշէի քարոզը չըզիտեմք, բայց այդ մեծանշան բառերով զարգարած եւ խորոխալից քարոզը մեր վրայ շատ վատ տպաւորութիւն թողեց, ինչպէս մի արքեպիսկոպոսը եւ քաջատուութիւնը խմելու վատ հետեւանքն զիմասին չէ կարող բարեբար ազդեցութիւն գործել զիմացինին, այնպէս եւ առաջնորդ Մուրաթեանի խօսքերը ծիծաղ կը պատճառէին մեզ եթէ օրսոյ խորհրդատուութիւնը կանխօրէն մեր սիրտը սեւեռվ պատած չը լինէր. առում եմ ծիծաղ կը պատճառէր, քանի որ մենք կասկածում էինք նրան անկեղծութեանը:

Դառնանք փաստերին. Կովկասեան եկեղեցական կառուածները գրաւուածն ցնցեց ամեն մի հայ մարդու սիրտը, մենք տեսանք եւ այժմ էլ տեսնում ենք թէ ինչպէս Կովկասի զանազան տեղերում ցոյցեր են լինում, ըլլողներն ու խնդիրներն ուղարկում վեհաբան. լուռ շնչանային եւ Օսմանեան հոյերը. Պատրիարք Օրմանեանի շնչաբեկանները իւր հօտին եւ ուղարկած բողոքը Ս. էջմիածնին մեր ուղարկութիւնը զբրայեցին: Անանս Զառան եւ Եւրոպական քաղաքներում Ս. էջմիածնին այնքան հեռու ապրող մեր հայ եղբայրները, բայց այսքան մօտ քիթը քիթն զիպած Ատրպատականը, որ ամենին շատ պարտաւոր էր իր ձայնը բարձրացնելու. լուռ էր անարար:

Բայց ինչու՞ էր այդ այդպէս. մի-թէ՞ Պարսկահայը բարոյապէս այնքան մեռել է, որ չէ գրում իր միակ ունեցած, դարբինից ի վեր պաշտած սրբավայրի անամօթ յափշտակման տխուր հետեւանքը. ոչ, նա զգում էր, բայց նա սգէս էր, նա սպասում է որ իր «խեղճ» առաջնորդը իրեն առաջնորդի. իսկ այդ «խեղճ» առաջնորդը լուռ է ինչպէս մի սեւ քար. նա չէ ուղում ձայնը բարձրացնել. իր իսկական կոչումը հասկանալով ամենին լաւ պարտականութիւնը կատարել. ինչու՞, որովհետեւ չէ ցանկանում այդ պատճառով իր յարաբերութիւնները լարեն Ռուսաց հիւպատոսների հետ: Ինչի՞ց մարդ, զեռ չի գիտէ թէ մի կրթութեամբ մարդ, որը ինչպէս իրեն կը գնահատէր:

«Միայն վարդապետը թողնեն մեզ, միւս կալուածները թողէք վերցընեն իրենց կատարարներ. պէտք է ընտրել միջին ճանապարհը, ուրիշ ճար չկայ. այս է իմ եւ ժողովրդի կարծիքը: Մտաւորապէս այս քս վանդակութեամբ կը մի նամակ է գրում Ս. էջմիածնին, ինչ անուն տանք այն մարդուն, որ ժողովրդի անուանից է խօսում, նրա կարծիքն է գրում առանց զէ՞ մի անգամ նրան հետ խորհրդակցելու: Եղիշէ վարդապետի կարծիքով այնքան էլ վատ չի եղել. Եկատարութիւնը մեզանին լաւ կը կատարուի կալուածները: այդ նրա համոզմունքն էր, բայց յանկարծ այդ համոզմունքի տէր մարդը այսօր հոգեհանգիստ է կատարում, քարոզ խօսում. եւ արտասուում. ինչու՞:

Միայն, որ Պարսկահայը բարոյապէս մեռած ժողովուրդ չէ, նա չէր կարող անտարբերութեամբ նայիլ այն ժամանակ, երբ իր ձեռքերն, արեւաբազ Հայրապետը գլխի մազերն է փետում, երբ իր եղբայրները ու ջոյրերը արիւն են թափում, կր իր քահանան եկեղեցու դրան արիւրաբար կուրծքն է դէմ անում բռնակալի գնդակին: Եւ այն գիշեր երբ առաջնորդ Մուրաթեանը իրը ինչ գործով ուղում էր քաղաքից հեռանալ մտակար Մածամպատ գիւղը գնալ, 70-80 ի չափ ծիսականներ լուսնի տաջնորդաբան եւ պահանջեցին, որ իրենց ձայնի եւ զգացմունքների թարգմանը լինի: Երկար վիճաբանութիւն տեղի ունեցաւ. ոտանք պահանջում էին նաեւ գրել վեհ. Հայրիկին եւ խնդրել, որ նա շտապարի այդ պահանջը, սմանք էլ, առաջարկում էին բողոք ուղարկել Յարին. առաջարկվեց ընդհանուր ժողով կազմել՝ այդ հարցերը այնտեղ վճելու համար. բայց առաջնորդը գրականապէս մերժեց զանազան պատճառաբանութիւններ մէջ բերելով՝ աւելի ճիշտ սովեստութիւններն անելով: Այդ տեղ վեճուեց բողոք ուղարկել կայսրին եւ ընտրեց մի մասնաժողով, որը պիտի խմբագրէր բողոքը եւ ներկայացընէր չաստակութեամբ երբ ընդունէր սպա ուղարկել, նամակի սկզբում մէ էլ ասացի, որ Եղիշէ վարդապետը տարմայիբ չէր այդպիսի սրբալ աննիւտ միջոց իր կաշին նըկատի ունենալով. հից այդ պատճառով էլ երկար ժամանակ ձգձգեց, կուեց մասնաժողովի անդամներին անձամբ իրենց կամենում էր այլ կերպ, իսկ վարդապետը միտերի կերպ, նա պահանջեց անպատճառ իր խմբագրած ձեռով լինի, երբ տեսաւ չի յաջողութեամբ բրայ, լաց եղաւ եւ այդ լացով միայն անդամներին շտապարին համոզեց, որ բողոքը լինի սնվակ, ինչպէս ինչու է ուղում. այդ համաձայնութիւնը կայանալուց յետոյ էլ բողոքը միաց միայն թղթի վրայ, իսկ առաջնորդը տպարանում — մամուլի մօտ, ժողովուրդը սկսեց կասկածել, չընկեր լուսնի թէ առաջնորդը ուսումով է, նա Ռուսաց հող է պատարասում եւ այլն. մի քանի յայտարարութիւններ գտնեցան գրադարաններում գտնազան բովանդակութեամբ. եւ վերջապէս այդ բողոքը ստիպեցին այդ մարդուն այս ամի սկզբին բողոքը հեռագրով ուղարկել կայսրին: Իսկ բողոքի թարգմանութիւնը տպի տալով ուղարկել զանազան խմբագիրներին եւ յայտնի մարդկանց ապահովեցան նամար, որ ինքը ուսումով չէ, եւ այնքան խորամանկն է, որ թարգմանութեան տալը թիւ չէ դրած, որպէսզի բնթերցողը չիմանայ թէ երբ է հեռագիրը խրելու. ուշացնելու ամօթը ձեռնկալու լաւ միջոց:

Ահա այդ մարդն էր, որ երկվ քարոզ էր խօսում, այդ վարդապետն էր, որ արտասուում եւ այդ է պատճառը, որպատում եմ թէ քարոզը մեզ վրայ ցանկալի տպաւորութիւն չը թողեց:

Մի ուրիշ անգամ կը գրեմ Եղիշէ վ. Մուրաթեանի գործունէութեան մասին:

Ոսկան Ս.

Մենք հայերս մեզ չենք ճանաչում, չենք ճանաչում նոյնպէս եւ մեր հասարակական — ազգային — կրօնական հաստատութիւններն ու սեփականութիւնները, կամ ինչ ճանաչում ենք, փոյլ չենք տանում նոյնարեւոյնի բարօրութեան համար ի գործ դնելու: Մասնով բացի մեր տունը մեր ձեռքով քանդելուց, որիչ օգտաւէտ դործի չենք յանդուր: Հապար աւագամ, հողած արձճի նըման, մեր ականջները լցրել են թէ հպատակ ժողովուրդները, մանր մունըր ազգութիւնները լրաց վրայ բնացող ու ճնշուի գործ դնող մեծ ազգերին կու չընալու, նոյնպէս նոյն շտապարին ու առաջարկին չըողաւորուելու համար, հետամուտ են լինում ուսման, գիտութեան ու աշխատում են կրթութեամբ լուսաւորել լրենց խաւար կողմերը, որով մեծ ազգերի դէմ իրենց ազգային ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար ստեղծում են մի տեսակ մը տաւոր ընդդիմադրութիւն փոխանակ գործնականի դիմելու, օրից մեծա մասամբ զուրկ են լինում նոքա:

Արդէն գիտենք ամենքս, որ Ռուսաստանի հայերը չունին եւ ոչ մի ազգային ինքնուրոյն հաստատութիւն կամ ձեռնարկութիւն, որոնց ձեռք բերելու կամ որոնց վերջին մնացորդները պաշտպանելու համար այսօր նոքա օրհասական եւ անհաւատար կու մղում են իրանցից հարեւարապատիկ ուժեղ մի վարդապետութեան դէմ: Ռուսիան ինչի՞ց հայերի վրայ գործ զննելով իր արջային վարդապետ ուժը, վերջին 6-7 տարիների ընթացքում առանց Աստուած ճանաչելու, առանց թղթի խալթ զգալու, ընդդէմ մարդկային նուիրական եւ դարբնով սրբաբողոքութեամբ իրաւանց, յանրապէս, ամենամակարիմ եւ առաջակներին միայն ներքին սխիզնեցնելով խաւարացրել է հայոց դպրոցները, յափշտակել հայոց վանքերի կալուածներն ու գրամները, գրաւել ընթերցարանները, քանդել ընկերութիւնները, ճնշել մամուլն ու գրականութիւնը, վերացրել հայ մարդուն հայ լեզուով երգում տալու եւ այլն:

Ռուսահայերը վերջապէս այսօր ինքնագիտակցութեան եկած, երկրի մէջ յառաջացրել են սոսկալի ընդդիմադրութեան ազգային անխախտելի իրաւանց բռնաբարման դէմ: Նոքա արդէն զիմել են գործնականի, որի յաջող ելք ունենալը դեռ եւս կասկածելի է: Մնում է որ օտար պետութեանց հպատակ հայերը, որոնք ցանուցիւ դարձնեն մէջ են, ոյ՞ տան գիտութեան եւ իրենց ազգային ինքնուրոյնութիւնը մասնոր ընդդիմադրութեամբ պաշտպանելու համար պատրաստեն սերունդներ: Այդ պէտք է միանգամ ընդ միտ հասկանալ մենք եւ լարուած ու տենդային գործունէութեամբ ջանանք առաջ տանել մեր մատաղ սերունդի կրթութեան գործը:

Իայց արի՛ ու տե՛ս, որ այդ տարրական ճշմարտութիւնները չէ հասկանում թէ՛ ըստի հայոց դպրոցների հոգաբարձութիւնը: Ուսումնական տարին արդէն սկսուել է. բայց դեռ դպրոցները իրենց ամենամեծ պակասութիւնների մէջ են գտնուում նախ դպրոցները ժամանակից ուշ բացուե-

ցին և մենջե ալսոր էլ ուսուցիչները և վարժուհիները պակասութիւն կայ... դասերը կանոնաւոր չեն ընդառնում...

Մարդ ապշուած է, երբ տեսնում է որ այդ գայրոցները վրայ ապարդիւն ու անտեղի կերպով մտնում են մեծամեծ գումարներ...

Ժամանակ է վերջապէս սթափելու աշխատինք և գործենք: (1) Կայծուցի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԲԵՐԸ (Լ'էօնօրիսիս)

Բարից ապաստանած երիտասարդ թուրք մը հրատարակած է բարակ տետրակ մը կարմիր կողքով, որուն վրայ նկարուած է չուանէ մը նախաձեռն Զէրքէշի մը պատկերը...

(1) Վերջերս Կերմանիայէն թէհրանի գրողներու տեսլութիւնը վարելու համար հրատարակած է Պ. Լ. Բաբայան, նախկին ուսուցիչ Երևանի դեմակած դպրոցին Թուրքիոյ քաղաքներով կրթական գործը թէհրանի մէջ պիտի ստանայ ցանկայի ընթացք և պիտի վերանան մեր յարգելի թղթակցի մասնաճիւղը...

ՐԱՆԱՍԻՐՎՈՐ

ՀԱՅԿ ԲԱՐՁՐԱՆԵՐԱԿԸ ԵՒ ԱՆԻ

(Շար. նախադրութիւն) (Ճանապարհորդական նկարագրութիւն Տօֆ. Քորթալի)

Երբ Ալանապարհի եւ իր աւերակներուն հրաժեշտի ողջոյն տալով ճամբայ ելանք, արեւը սկսած էր արդէն զէպի արեւմտեք թեքուիլ: Կառապանին հաշուով երկու ժամ վերջ գիշերուան մութը դեռ չէր կոխած պիտի իջեանէինք Կարաբիւրսի պանդոկը, որ պիտի գտնէինք տախտակներով անոնց վրայ քանակուելու և ինքնաձեռն (սամալար) մ' թէյ պատրաստելու համար: Ասոնք են Հայաստանի մէջ պանդոկի մը անհրաժեշտ առարկաները: Ծամբան սկսած միջին լաւանալ եւ երթալով գեղեցկանալ, որքովեքեք հիմա պիտի տեսնէինք Արագածէն բղտող գետի մը վրայէն, Քարէ կամարածել կամուրջ մը ձգուած էր լեռնային վայրա-

է Արի-Սուարիի յիշատակին, այն նշանաւոր հրապարակագրին որ սպաննուեցաւ, «գարուս ամենամեծ մարտիրոսը, Մուրատ Ե.ը. ազատելու համար»: Գրողի կին հեղինակն է Ֆէյմի, նախկին բարձրաստիճան պաշտօնակցի մը զաւակը: Այս ոչուշտաբարդ ու յա-ժեհն-ժիւրք ըմբռնուած յեղափոխականութիւն մը կը պարունակէ, ինչ որ բաւական տրգայական ու զուարճալի է: Գրքովը կարգացող իսկույն կը հասկնայ որ այդ երիտասարդ թուրքերն ալ նուազ թուրքեր չեն:

Ֆէյմիի պատմածները արդէն ծանօթ բաներ են եւ նորութիւն մը չեն բերեր համայնական գրութեան բարբարոսութենէն: Պատարները արդարութիւնը կը ծախեն, կեղծ վկաները կը վխտան եւ արհեստակցութիւն մը կը կազմեն, յրտեսութիւնը այն աստիճան տարածուած է, որ որդին հօրմէն կը կասկածի, իրամ կրօնական ընկերակցութիւնները անլուր մենաշնորհներ կը վախելն ու պաշտօնեաները, մեծէն մինչեւ է՛ն պղտկները, «կուտեն», բառ նուիրագործուած բացատրութեան, ի նեճուկս հարկատուներու: Ոչ մէկ ապահովութիւն, ոչ մէկ ազատութիւն, սնապառ ու դողահար բռնակալի մը կը քահանայութիւնը կակնկարէ մը համար, մահ մէկ քառի եւ կործանում մէկ կասկածի համար, ահա թուրքերը կեանքը Սուլթան Համիտի կառավարութեան օրով:

Իրաց այս տեսակ վիճակի մը համար բարենորոգչականութիւնը իտալական միջոց մըն է, եւ Երիտասարդ-թուրքերը իրենց փրկութիւնը կակնկարէ մը համար, Համիտը տապալող յեղափոխութեան մը, որով օսմանեան գահին վրայ պիտի նստեցնեն իմաստուն, վեհանձն, բարեսիրտ եւ սահմանադրական վեհապետ մը: Թուրքիան հասունցած է. կըսեն, սահմանադրութեան համար, եւ ինչու ալ լայնապէս ըլլաք, ինչու թուրքիա արժանի չըլլաք ազատական վարչութեան մը: Մեր պահանջած սահմանադրութիւնը ոչ թիւային ձեւա-

րելի է, այլ գոյութիւն ունի: զայն յղացած է Միտոսա փառան եւ 1876ին նոյնինքն Ապտիլ Համիտ հրատարակած: Ծարի մը ետքը խափանուեցաւ, Բայց այդ սահմանադրութիւնը ըստ բաւականին ազատական չէ, ու մենք աւելի լաւը կերպենք, թէ եւ գոհ պիտի ըլլայինք ինչէ զայն վերահաստատելն ու յարգելն: Բայց Ապտիլ Համիտ երբեք չի պիտի զիջանի առ: Ուրեմն, բռնաւորին ոչնչացումը, համիտական ամբողջ արհաւանակներու քննաշնորհ մը անհրաժեշտ կը դառնայ: Անկէ վերջը պիտի յայտարարենք սահմանադրական կառավարութիւն մը ընդհանուր քուէարկութեամբ ու ապագայ սահմանադրութեան համար լուրջ երաշխաւորութիւններով:

Ֆէյմիի ծրարները, որ գրքովին վերջին երեք կը գրուէ, կը նախատեսէ նորային փրկութեան քօմիթէի մը ստեղծումը, որուն անդամները շարժման սեփական կընտրուին և միայն Օսմանցիներ կրնան ըլլալ: հանրային փրկութեան քօմիթէն առանց ուէ գաղափարի մահուան պիտի դատապարտէ Սուլթանն ու զահաժառանգը, Շէյխ-իւլ-իսլամը և «համիտեան մարզակները»: ան պիտի ազատէ Մուրադը և քաղաքական բոլոր դատապարտեալները անոնց տեղի կամ կրօնքի խարութեան: ան պիտի լուծէ մէկ քանի խզուած կրօնական եղբայրակցութիւնները: ան կոչ պիտի ընէ բոլոր Օսմանցի շափահաններուն, որպէսզի սահմանադրութիւն մը ձևակերտ հարկաւորութեան ընդդէմ, Յետոյ հանրային փրկութեան քօմիթէին տեղ պիտի հաստատուի անժամանակայ յեղափոխական ասեան մը, որուն անդամները փոխն ի փոխ ժողովն պիտի ունենայ վերջնական կառավարութիւնը հաստատելու: Ան ինչ ինչպէս կըլլայ յեղափոխութիւնը «բոլոր Օսմանցիներուն Ազատուի եան և Արդարութեան հաւասարութիւն պրոպագոն»:

(Շարունակելի)

Ն Մ Ո Վ Ա Տ Մ Ո Ւ Փ

Սիրաբաւեւք թեքութի մէջ հրատարակուեցան Մեթոյ յարգելի խափանաւոր հասցեէն սեղգուած կարգ մը անհիշխան թիւերը, եւ այս այնպիսի անգլայի լեզուով, որ կը վերադառնէ ամէն կրթութեամբ լինելոց փրկութեան պղտցմանը: Երբ ու տարատ կը բերէ մասնաւոր և տարբարական խօսքին: Եթէ հոն գործածուած խօսքերը ու բաները լոյս տեսնէին միւրուրդական թեքութի մէջ, մասնաւոր ներկայացուցիչները ժողով գումարելով Անախիճայի կենթարկէին անոր թեքութիւնը:

Մենք կը հրատարակենք այս կերպով վիճել և չենք զիջանի խօսքով մը իսկ պատասխանել «Իրանու» քար գրածներուն:

Ն Մ Ո Վ Ա Տ Մ Ո Ւ Փ

Պիւէսթ, Հոպօքըն 2, Ս. Կալ, Կոմիտէ: Զեր նշանակը ստացանք, թեքութի 556 թիւէն սկսեալ կրտսանաք: Բաժանորդագիրը հստակ է քաղաքի մեզ վրէպել:

«Կրօյ, Ն. Ե. և Պ. Մ. Կ. Հ. 1 1/2 Ֆր. և այլ չենք բաւական տարօրինակ բան է և կը բաւէ միայն թիւերը քաղաքի մեջ: Ինչ որ է, զօրօջէն կուղղուի:

«Ինչ: Մեր պատճառով, թրոխարածեան: Զեր նշանակը ստացանք և կողը կը տպենք 50 օրինակ: Հաճեցէք ըլլալիք ծախքերու և քաղաքի մեջ զրկել 3 Ֆր.: Մեր կարծիքով լուր կընէիք յոնի նշանակով մը կազմել և պաշտօնական ձեռնարկել այդ հանգանակութեամբ: Կը դուրսը ձեր ետանդը: — Զակազկի, Եգիպտոս Պ. Ա.

վազ ջուրին վրայ, որ սակայն աւազանը ձգելով կողմնակի ճամբայ մը բացած էր իրեն: Կովկասի մէջ ընկանապալս շատ տեղ կամուրջ գտնել անկարելի է, ճամբորդները կանցնին գետերու ցանցող տեղերէն: Աստի սովորութեան համաձայն մեր կառապանն ալ կառքը քրչեց ջուրին մէջէն: Հոսանքը ուժեղ էր եւ ո՛վ գիտէր թէ գետը որքան խոր, կառքին անիւր կը բաղկեր յատակի քարեղուն եւ կը հանէր տարօրինակ ճարճատու: Ես սկսայ վտանքին վրայ խորհիլ, որ մեզ կըսպառնար, բայց ի հարկէ տեղափոխուելու բան մը գիտէին, որ ձիերը ատկէ քշեցին, իմ ընկերակից քահանան բարբոզին հանդարտ էր:

Շուտով պիտի տեսնէինք սակայն ուրիշ բան: Հաղիւ հասած էինք գետին մէջ տեղը մէկէն ի մէկ ինկանք խոր սեղեր, ջուրը կը զարնուէր կառքին եւ կը խուժէր ներս: Ստիպուած էինք ոտքերնս վեր բռնել, որ չը թըլլին եւ անս ձիերը կանգ առին, անկարելի էր զանոնք յառաջ քշել: Հոսանքը խիստ ուժեղ էր եւ երեւի անիւներն ալ բռնուած էին յատակի քարերէն: Կենդանները սկսան անհանգիստ կերպով դողդողալ, նոյն իսկ մին լուծէն դուրս ելաւ... դուրս թիւնը փափուկ էր, ամէն վայրկեան կարող էինք հոսանքէն քշուիլ ու տարուիլ: Կառապանը կը գտնուէր անուղղի մէջ, իր աստիճան հոգն էր մեզ եւ անասունները ազատելու: Ինձ առջարկեց լուծէն ազատուած ձիուն վրայ նստիլ եւ եզերքը ելլել: Ես համաձայնեցայ, կառքին առջեւի մասէն ցատկեցի ձիուն վրայ եւ սկսայ քշել: Խեղճ անասունը երեւի նոյն դրութեան մէջ էր ինչպէս ես, եզերքը կարծես մեր առջեւէն կը փախչէր, փոսա դուրս դառնայ, ձիւն չը նայելով իմ այնքան աշխատանքին յաղի մի քանի քալ յառաջացած էր եւ ան կանկարծ ինկաւ փոսի մը մէջ, ես զլորուեցայ ձիւն վար եւ մինչեւ մէջքս ջուրով թաղուեցայ, իրաւ է ցամաքէն քանի մը մէթը հեռու էի, բայց ինչ ջիւղի, որքան խորը պիտի ինչայի յաղորդ քալափոխի... հոսանքը կանցնէր ճիշդ այս կողմէն: Ձիւնը կանգնած էր իմ առջեւ եւ իր ծանրութեամբ կարգիլէր, որ ջուրը

ինձ քշէր տարէր, անձա պէնք էր ձին առաջ շարժել, քարեղանաքար յաղորդեցայ եւ անիւները դուրս ցցուած քարերէն վեր մագլցելով գրկերի ցամաք չողը, ինձէ ետքը վեր դառնալու համար ձիւն: Այս մտաբանութեան ետ կողմի միջոցին երկու Հայերը շարունակ խաչ կը հանէին եւ կաղթէին — «Ախ, պարտն, ես ձեզ համար որքան հոգ քրչի որքան վախցայ, — կը կրկնէր կառապանը մեր պաշտակէն վերջ: Այս բոլորը տեսնել յետոյ ո՛վ պիտի համարձակէր նոյն փորձել: Կառապանը նսկայ եւ ուժեղ կազմութեամբ մարդ մը բոլորովին մերկացաւ, իմ կողովս զարկաւ ուսին եւ ջուրը ձեղքելով հասաւ արիւ: Դարէն վերայարձաւ զէպի կառքը եւ նետեց մեր ճանապարհորդական իրեղենները զէպի ինձ: Քահանան կտտեւեցաւ կառապանի օրինակէն եւ յաղթելով ջրի խարթախ խաղերը յաղորդեցին հասաւ կղերք: Կառապանը նստեցաւ իմ գոյս հանած ձիւն եւ քշեց զէպի մօտակայ գիւղ կառքին եւ ձիերուն օգնութիւն հասցնելու համար: Փոխադր. Մարգարէտնի (Շարունակելի)

ինձ քշէր տարէր, անձա պէնք էր ձին առաջ շարժել, քարեղանաքար յաղորդեցայ եւ անիւները դուրս ցցուած քարերէն վեր մագլցելով գրկերի ցամաք չողը, ինձէ ետքը վեր դառնալու համար ձիւն: Այս մտաբանութեան ետ կողմի միջոցին երկու Հայերը շարունակ խաչ կը հանէին եւ կաղթէին — «Ախ, պարտն, ես ձեզ համար որքան հոգ քրչի որքան վախցայ, — կը կրկնէր կառապանը մեր պաշտակէն վերջ: Այս բոլորը տեսնել յետոյ ո՛վ պիտի համարձակէր նոյն փորձել: Կառապանը նսկայ եւ ուժեղ կազմութեամբ մարդ մը բոլորովին մերկացաւ, իմ կողովս զարկաւ ուսին եւ ջուրը ձեղքելով հասաւ արիւ: Դարէն վերայարձաւ զէպի կառքը եւ նետեց մեր ճանապարհորդական իրեղենները զէպի ինձ: Քահանան կտտեւեցաւ կառապանի օրինակէն եւ յաղթելով ջրի խարթախ խաղերը յաղորդեցին հասաւ կղերք: Կառապանը նստեցաւ իմ գոյս հանած ձիւն եւ քշեց զէպի մօտակայ գիւղ կառքին եւ ձիերուն օգնութիւն հասցնելու համար: Փոխադր. Մարգարէտնի (Շարունակելի)

րամ Ի. — Չեր բաժանորդագրու-  
րութիւնը կը սկսի 21 հոկտեմբեր  
1903 էն և կը տեւէ մինչեւ 21  
հոկտեմբեր 1904 (Ն. Տ.) :

Հաճեցէք խօստացուած ժամա-  
նակ բաժնեգիրներ զրկել : Կըսպա-  
սենք ձեր լիզմակցութեանց :

— Գրական Պ. Ե. Ֆրանգեանց  
— Նամակնիզ ստացանք, յնոր  
հաւալութիւն : Կըսպասենք ձեր  
յօգուածներուն : գրեցէք նաեւ  
ճանապարհէն :

«Գրական Պ. Ե. Ֆրանգեանց»  
հակալութիւն : զրկեցէք ձեր  
յօգուածները :

**ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

Ռուսոս գէն եղբայրասէր ոմն  
մեզ կը գրէ. «Անձամբ հաստա-  
տելով որ Ալիքսան Զիլինկիրեան  
կոչուած թրքական լրտեսը Վառ-  
նաէն փախչելով Ռուսիա ան-  
ցած և Պուրէշ գտնուող վատ  
փեսային քով ապաստանած է,  
կը վախնանք թէ հոն ալ իր լր-  
տեսական զոհերը պիտի ունե-  
նայ : Աստի հրապարակաւ կը զ-  
գուշացնենք մեր Պուրէշի գաղ-  
թական եղբայրները, որ չխաբ-  
ուին այդ ցածին մեքենայու-  
թիւններէն և ի հարկին հալա-  
ծելու » :

— Կիմանանք, որ Կեանիս նա-  
զարբեցեանցի — Երբեմնի Հն-  
չակեան կուսակցութեան ղեկա-  
վար — վրայ պաննութեան փորձ  
է կատարուած : Վերքը ծանր է,  
բայց ոչ վտանգաւոր :

— Խիւրքիոյ մէջ Հայեր դեռ  
կը շարունակեն իրենց հանգա-  
նակութիւնը՝ թիւրք զօրքին օգ-  
նելու համար : Այդ տեսակ ստո-  
րին վարժուէքի առջեւ իրա՛ւ  
ամէն Հայ մարդ կարմրելու է  
ամօթէն :

— Ֆրանսայի Հայաստաններու  
Կոմիտէի կողմէ Գիյառ և Բրե-  
սանսէ նամակով մը կոչ ուղղած  
են կարեւոր անձնաւորութեանց  
հոկտեմբեր 25ին Բարիզ հաւաք-  
ուիլ և միջազգային համագումար-  
ում մը կազմել Հայկ. և Մակե-  
դոնական հարցերու վրայ խոր-  
հրդածելու համար :

— Լոնտոնի Ս. ձէյմզ Հէլլի մէջ  
տեղի ունեցաւ մեծ միթինկ մը  
Հայաստանի և Մակեդոնիոյ ի  
նպաստ :

Խօսած են Վօրսթըրի եպիսկո-  
պոսը, ձ. Բրայս և է. Ֆրայ :

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Պուկարական ընտրութիւննե-  
րը մօտ են : Կը տիրէ կուսակցա-  
կան պայքար : Արդէն պատահած  
են դէպքեր : Նախկին նախարա-  
րապետ Տանէվ յարձանում կրեց  
հակացանքով խոտնեռէ և վիրա-  
ւորուեցաւ :

— Դուռը խոստացաւ պատմել  
պուկար սահմանադրութիւն անց-  
նող զօրքը :

Պուկարիա ինչպէս նաև Թուր-  
քիա կը թեթեւցեն սահմանի  
հսկողութիւնը :

— Սելանիկէն Սօֆիա կը հեռա-  
գրեն, որ այն կողմերու պուկ-  
արները կը գտնուին անտանելի  
գրութեան մէջ և մտադրութիւն  
ցոյց կուտան պաշտպանութիւն  
գտնելու համար նետուիլ կաթօ-  
լիկ եկեղեցւոյ ծոցը :

Արդէն ֆրանսական միաբանու-  
թիւններ բացած են այդ կողմե-  
րը ազատներու համար խոհա-  
նոցներ և յառաջ կը տանին ի-  
րենց բրօքակաղը : Ամերիկացի  
գործակալներ կուզեն մակեդո-  
նացի աշխատասէր երկրագործը  
Ամերիկա գաղթեցնել :

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Թ Ո Ւ Ր Ք Ի Ս**

Սուրբոյ մէջ պետական հար-  
կերը բարձրանալուն համար գծ-  
գոհութեան և բողոքի շարժում  
ներ առաջ եկան :

— Մակեդոնական քանդուած  
գիւղերու վերաշինութեան հա-  
մար նախարարական խորհուրդը  
որոշեց 50,000 թրքական արծաթ  
յատկացնել :

Ի հարկ է որոշումը պիտի մնայ  
միայն որոշում :

**Ի Տ Ա Ղ Ի Ս**

Պապման քարտուղար ընտր-  
ուած է Միրրի Տէլ Վալս, միջակ  
կարողութեան տէր մի մարդ : Սա  
Վատիկանի առաջին օտարազգի  
քարտուղարն է :

— Ցարի Հռովմէական ճամբոր-  
դութենէն հրաժարումը ետ կան-  
չեց նախարարապետ Մանարոն-  
ի, որը հրաժարելու տրամադր-  
ութիւն ցոյց կուտայ :

— Կարտինալութեան աստիճա-  
նին բարձրացան Մէրրի Տէլ Վալս,  
Կաճիանօ, Վօրացցի և Բէրիտո-  
լի :

— Ցարը Հռովմէական այցե-  
լէ, շնայելով որ Հռովմէի մէջ  
ընդունելութեան ամէն պատրաս-  
տութիւն տեսնուած էր : Իտալա-  
կան մամուլը մէջ բարձրացաւ այս  
առթիւ մեծ աղմուկ, սօցիալիս-  
տական թերթերը ուրախացան  
և Յարին Հռովմէ գալը արդիւնեւ  
պատիւը իրենց վերագրեցին :  
Պահպանողական թերթերը մեծ  
ցաւ զգացին, որ Ցարը իր մտա-  
դրութենէն ետ կեցաւ :

Հռովմէի թերթ մը կը յայտա-  
բարէ, որ ռուս գաղտնի ոստիկա-  
նութիւնը այս գործին մէջ խա-  
ղաց վատ դեր, Հռովմէ վրայ չա-  
փազանցուած տեղեկութիւններ  
տալով : Թերթը կը բողոքէ ասոր

դէմ և կառավարիկ կառավարու-  
թեան, որ խնդիրը քննութեան  
առնէ :

**ՅՐԱՆՍԱ**

Իտալիոյ թագաւորը և թագու-  
հին մեծ ողբերութեամբ ըն-  
դունուեցան Բարիզի ժողովրդին  
կողմէ և կեցցէ՞ «Հանրապետու-  
թիւնը», կեցցէ՞ «Իտալիան»,  
կեցցէ՞ «բանակը» ալապակնե-  
րուն տակ առաջնորդուեցան է  
լիզէ :

Նախագահը տուաւ ի պատիւ  
արքայական հիւրերուն փառաւոր  
ճաշկերութիւն, որու միջոցին փո-  
խանակուեցան սիրալիք խօսքեր :  
Թագաւորը և թագուհի Բարիզի  
մէջ կատարեցին յետոյ մի շը-  
ջան և ժողովրդի կողմէ ընդուն-  
ուեցան հանդիսաւորութիւննե-  
րով : Անոնք այսեղեցին հետա-  
քրքիր վայրեր : Էնվալիտի մէջ  
թագաւորը կանգ առաւ Կարօլի-  
նի արձանին առջեւ և երկար ա-  
տեն լուռ դիտեց :

Արդէն կը խօսուի Լուպէի և  
իր կնոյ ընկելի իտալական ճամ-  
բորդութեան մը մասին :

— Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ  
իրաւագատական դաշնագիրը կն-  
քուած է : Նոյնը ոյժ պիտի ունե-  
նայ մեծաւ մասամբ ապագայ ծա-  
ղելիք վէճերու մէջ, որոնց սահ-  
մանը սակայն շատ ընդարձակ  
չէ :

**ՈՎԿԻՍՆԻՍ**

Դաշնակցական խորհրդի որո-  
շումով Ովկիանիոյ պետութեան  
մայրաքաղաքը պիտի ըլլայ Թու-  
մուի :

**ՉՈՒԻՑԵՐԻՍ**

Իտալիոյ կառավարութիւնը  
Սիմբոնեան թունելի վերաբեր-  
եալ գործերը ձգած է Չուիցե-  
րական կառավարութեան :

**ԴՍԵՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔ**

Թերթ մը հաշիւ կուտայ Չի-  
նական ծովու վրայ գտնուած պա-  
տերազմական ոյժի վրայ, որմէ  
կերեւայ թէ ձաբան և Անգլիա  
միասին կրկին անգամ ուժեղ են  
քան Ռուսիա և իր դաշնակիցը՝  
Ֆրանսա միասին :

**ՊԵՆՏԻՔԱ**

Լէօբօլտ թագաւոր պիտի գայ  
Վիէննա և Գոնկօի խնդիրներու  
կարգադրման համար կայսեր  
միջամտութիւնը պիտի խնդրէ :

**ԳԵՐՄԱՆԻՍ**

Կէսելի մէջ 71 տարեկան մե-  
ռաւ յայտնի գիտնական և եր-  
կըրբան Հայրերի Մօէլ :

**ՉԵՑՈՒՆԵՐ**

Չէթուրի անցեալէն և ներկայէն  
Ա. Ե. Ռ. Մաս  
Հետաքրքրաշարժ գրքերը լոյս տե-  
սած են և կը ծախուին :

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Համալսարանական կրթութիւն  
ստացած Երիտասարդ մը, որ դեռ  
Երրորդ կը գտնուի, ուսուցչի պաշ-  
տօն կը դիմուէ հայ վարժարանի մը  
մէջ :

Դիմել «Շարժում» խմբագրութեան :

**ԱԶԳ**

Կը յայտարարենք վառնայի և ու-  
րիչ քաղաքներու մէջ գտնուած բն-  
թերթերու որ ընթերցարանիս մէջ  
կը ծախուին կեսեւալ գրքերը և  
պատկերները :

ԳՐՔԵՐ

Դիւցազնօրէն	1. Յր.
Ազատութեան ճանապարհին Ա.	30
	Գ. 30
Ամբոխային տրամաբանութիւն	53
Ապստամբ Սասունը	20
Հայրենասէրի տաղերը	20
Հերոսը	20
Հայուհիներին	20
Ապստեղեր	20
Մեծ առաւօտը	50

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պետո (Պուկ.) փոքր.	40
Կարօ (Ա. Զօրեան) մեծ.	50
Նշանաւոր հայ դէմքեր	1...
Ուրիչ քաղաքէ եկած յանձնարարա- կանները փութով կը կատարուին և զննուեն որ զիբութեան համար Պուկ. նամակաբօյժ ևս կը ընդունուի :	
Մօտ օրէն կը հասնին նաև «Պետո» ի (Պուկ.), «Բարկէն-Սիւնի» ի, «Աղ- բիւր-Սեբեք» ի և «Պետո» ի (Վանեցի) մեծ պատկերները 50 Սնդ. հատը :	
Վարչաբիւն	
10 Անպ. Վառնա	«Բարկէն-Սիւ- նի» Բնք.
	Վառնայի

**ԿԸ ՓՆՏՈՒՈՒ**

Սարգիս Մխոյեան 35 տարեկան.  
(Պիթիսցի) կորվու գիւղացի, 1896ին  
սաղին ուր գտնուիլը յայտնի չէ : Ի-  
րեն ծանօթ, բարեկամ և կամ հաս-  
ցեն գիտցողներ թող հաճին խմս-  
տայ :

Մարտիրոս Ապագրեան  
Մալ. այրեն գմբի  
Թրոյ- Ն. Ե.  
(Ե. Ս. Ա.)  
Եւ կամ խմբագրութեանս :

**ՄԱՍԻ ՆԵՐԿ**

ՀՐԱՇԱԼԻ ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ  
Դիմել Գ. Ա. Զարպիսեանի  
Վառնա Պուկարիա)

**ОТГОВОРНИКЪ**

Мурадъ-Ераносянъ

Цедатинча, Взаимность «Варна